

20186 Ринквортине

Онгунье

4мм

Изящный широкий

и

широкий



Ринквортине

1882

2010

2002

2.21
23

Հրատակութանձ Գյուղապետ Ալեքսանդր Մէլիք-Հայկազեանի Տալքով:

Թ Ա Պ Կ Ո Յ Է

Կ Ա Մ

ՄԱՆԿԱՆՑ ՊԱՐՏԵԶԸ


Ե Ւ

ՆՈՐԱ. ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

ՀՐԱՊԱՐԱ. ԱԿԱԿԱՆ. ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ա. ԲԱՀԱՄԲՐԵԱՆԻ.

Կարգացումն 1882 թ. Մայիսի 4-ին Տիկին, Արծըունու Ժատրանում
Յօդուած Հայոց Առաջին Ընդհանուր Ռազմացական Ժողովին



Թ Ի Ֆ Լ Ի Զ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԵԼԵՅԵ ՓԱԳԱՅ, 5

1882

8502

Հրատարակուած Գնդապետ Ալէքսանդր Մէլիք-Հայկացեանի Տախորութիւն

291

370

1868-FA. ፩ ፭ ፳ ፻ ፻ ፻ ፻

372.21
f-23 ^{mb}

411

ՄԱՆԿԱՆՑ ՊԱՐՏԵԶ

b; b

ՆՈՐԱ. ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԳԱԱԱԽՈՎԵԼՈՎԱՐ

Ա. ԲԱՑԱԳՐԵՎԱՆ

7/31. 192

Կարգացուած 1882 թ. Մայիսի 4-ին Տփխիո, Արք ըստ Սովորութեան Հօդուած Հայոց Առաջին Ընդհանուր Աւագագական Փարմիս

Բ Ի Ֆ Լ Ի Զ

ՏԵՇԱՆԿՈ ՄԱՐՏԻՐՈՒԵԱԾԻ ՅՈՒՆԵՑ

ԵՐԱՎԵՐԻ ՓՅՈՒԹ. 5

1882

ԺԱՂԿՈՅԸ ԿՅԱ ՈՐ ՄԵ ԻՆ ՆՈՅՆ Է ՄԵԿԱԿՆՅ ԳԱՐՏԵԶ,

ՄԵԾԱՎԱԹԻՒ պարոններ և տիկիններ:

Համարեսոյ ՅՈ տարի է, որ Թթէօթէլի ծաղկոցը, այն է մանկանց պարտէզը, մեծ ընդունելով միւն է գտել բոլոր Եւ-
րոպակի մէջ. տարի ցատրի աւելանում է ծաղկոցնեւի ու նո-
ցա մէջ դաստիարակուող մանկանց թիւը: Պարզ է, որ ծաղ-
կոցը ժամանակի պահանջ է և իւր օգտաւէտութիւնը ասլա-
ցուցել է իւր սաների վերաբ: Այսուամենայնիւհ, մեր մէջ դեռ
շատ քիչ անձննք կան, որ պարզ հասկանալին, թէ ինչ է և
ինչ նշանակութիւն ունի ծաղկոցը: Որպէս զի լաւ ըմբռնենք
նորսա ինչութիւնը և նպասակը, մենք նախ և առաջ պիտի
պարզենք թէ ինչ է մանկան հոգեկոր կեանքը և ինչ է հար-
կաւոր նորսա կանոնաւոր գալագացման համար:

Աւտենին ինչպէս ենք կարող ճանաչել մանկան հօգույս է-
ռավթիւնը. Ե հարկէ նորանով, ինչ որ բոլոր երեխանները գոր-
ծում են, ինչ որ ընդհանուր է բոլոր երեխաններին. Յայտնի է
որ խաղը կազմում է բոլոր մանկանց ընդհանուր յատկու-
թիւնը, խրաքանչիւր, գոնէ առողջ մանուկ խաղում է և ալ-
լի խաղալ, վասն զի սա է այն միայնակ գործողութիւնը,
որին նա ընդունակ է: Նա ալլու խաղայ, զի ոչինչ չի զար-
գանում առանց մի որ և է գործողութիւնն. Ծառը կանաչում
է, ծաղկում, պտուզ քերում, տերեւաթափ լինում և էլի կա-
նաչում. Երկնքի մարմինները պատում են արեգակի աւ երկքի
շաբաթը. արեւնը մեր և կենացանեաց երակների մէջ գտնում է
մշտական շաբաթութեան մէջ. չէ՞ որ այս բոլորն էլ գործո-
ղութիւններ են: Բայց մի և նոյնը տեսնում ենք և մարդույս

³⁾ Ո՞ւշ այս գասահօսութիւնը քաղաքածէ է զլիսաւորապէս տիկին
Մարդունց - թիւ լորդի Երկասիլու թիւննեւըց:

Дозволено цензурою. Тифлисъ. 15 Іюля, 1882 г.

Типографія І. Мартirosіанца. Орбеліан. ул., 5

վերաբերութեամբ. մարզս խօսել է սովորում—խօսելով, կարդալ է սովորում—կարգալով, գրել—գրելով, նկարել—նկարով և այլն: Այլ որ մի օտար լեզու ուսել է միայն կարգալով և եթք գիտուած չի ունեցել այդ լեզուով խօսելու, նու կամ բոլորովին չի կարող խօսել այդ եւր ուսումնասիրած լեզուով, կամ կը խօսի չամա գժուտութեամբ: Պարզ է որ մեր հոգեոր զօրութեւնները լիւհան են գալիս, շարժողութեան մէջ մանում ու վարժուած միայն զործողութեամբ: Հոգին չի կարող զարգանալ առանց գործողութեան: Յայց թնչ է կարող գործել Յ և 4 առաքեկան մանուկը բացի խաղալուց: Աւրեմն և խաղն է այն բնական միջոցը, որով զարգանում է մանուկը և որով նու պիտի զատարարակուի, ուրեմն և այն երեխան, որ չի խաղում, որին արգելում են խաղալ, նու այդ և չի երեխայ, նու ձերացած մանուկ է:

Այսուամենայնիւ մանկանց խաղը չի կարելի և չը պիտի թողնուի արտաքին հանգամանքների աղջեցութեան, այդ հարկաւոր է աւաշնորդել ուզեցոյց լինել մանկան, որտէս զի նորա խաղը ունենալ մի ուրախառիթ հիմքանիք: Վասն զի ինչպէս որ բոյն է երկը խաւարամում անապէս և մանկան հոգին է անդխառիթութիւնից բարձրանում զէպէս մտաւոր կերպ: Ինչպէս որ հարկաւոր է կատարել մի քանի որոշեալ պահանջ, որտէս զի երկը մէջ գանուած սերմք ծէ, ծաղկէ և պառզ բերէ, այն անապէս և մանկան հոգեոր կեանքն է պահանջներին գոհչութիւն տարուց: Ակզրումը նորա այդ պահանջներն էին հասարակ բնակարանը, հասարակ զգեստը և պարզ կերպակութը, որոնց համար նու գործելով երկար գարերի ընթացքում փոփր առ փոփր զուրս եկաւ ևր վայրենի զրութիւնից և զգաց մի առաւել բարձր պահանջ, նորա լոկ զգայարանական ձրգութիւնից ձագեցան հոգեոր ձգառութեար: Հոգին ազատուեցաւ զգայարանական կենաց փոշուց, որպէս զի յագեցնէ իւր առ գեղեցիկն ունեցած ծորակը. այնուհետեւ ձագիցան այսուստիւնից, յերեւան եկան գիւղեր, քաղաքներ, մեծամեծ շինուալիքների, շրջապատ գիտական կենաց փոշուց: Այդպէս ահա մարդկութիւնը փոփր առ փոփր յառաջ գնալով մտաւ առաւել բարձր գարաքարական աշխարհը, և այնուհետեւ սկսեց զիւել ու քննել ընութեան երկութեները և համբարել այժմեան գիտութիւնց չափագանց բազմակողմանի պահարը:

Մանկանց խաղը առաւել ծանրակշիս նշանակութիւն է

առանում մի ուրիշ կողմէց: Աստուած մարդուս չնորհել է մի այնպիսի յասկութիւն, որից զուրկ են միաս արարածները: Աւզում եմ ասել որ մարզս մի հոգեոր էտի է: Նորա համրութեար ձգառում են զէպէս հոգեոր կեանքը: Եւ այս աչքի առաջ պիտի ունենայ նու և գտամիարակութիւնը: Վասն զի ով է կարող խնամել այդ ձգառութեար այնպէս, ինչպէս պահանջում է մանկան հոգւոյ էութիւնը, եթէ լիրաւի նու ծանօթ չէ զորա հնեա: և թնչ առաւել լաւ միջոց կայ ծանօթանալու այդ ձգառութեարի հետ բացի նորանից, ինչ որ մանուկը գործում է, բացի նորա խաղից: Եւ եթէ քննող աչք ձգելու լինքնք մանկանց խաղի վերայ, այն ժամանակ մենք կեանք կը տեսնենք, որ այս տեղ պատարայտուած է մի և նորնը ինչ որ մարդկային ազգի մտաւոր մշակութեան պատմութեան մէջ: Մարդկային ազգի մտաւոր մշակութիւնը սկսում է նորա ման կութ ետ ն հետ և ձագում է մարդկային ընկհանութը, այն է կոպիս և միայն զգայարանական պահանջներին գոհչութիւն տարուց: Ակզրումը նորա այդ պահանջներն էին հասարակ բնակարանը, հասարակ զգեստը և պարզ կերպակութը, որոնց համար նու գործելով երկար գարերի ընթացքում փոփր առ փոփր զուրս եկաւ ևր վայրենի զրութիւնից և զգաց մի առաւել բարձր պահանջ, նորա լոկ զգայարանական ձրգութիւնից ձագեցան հոգեոր ձգառութեար: Հոգին ազատուեցաւ զգայարանական կենաց փոշուց, որպէս զի յագեցնէ իւր առ գեղեցիկն ունեցած ծորակը. այնուհետեւ ձագիցան այսուստիւնից, յերեւան եկան գիւղեր, քաղաքներ, մեծամեծ շինուալիքների, շրջապատ գիտական կենաց փոշուց: Այդպէս ահա մարդկութիւնը փոփր առ փոփր յառաջ գնալով մտաւ առաւել բարձր գարաքարական աշխարհը, և այնուհետեւ սկսեց զիւել ու քննել ընութեան երկութեները և համբարել այժմեան գիտութիւնց չափագանց բազմակողմանի պահարը:

Մի և նոյն հշանակութիւնը և մի և նոյն նպատակը ու-

նին նաև առանձին անհատների մանկական, երիտասարդական ու այլական ձգտումները: Եւ եթէ յիշաւի մանկական խաղը նորա ձգտմանց ազատ արարաւատութիւնն է, իսկ այդ ձգտումները արմատ են ապագայ՝ մտաւոր կազմակերպութեան, այնուշետև չկատ մեզ համար ոչինչ ուրիշ այնքան առաւել ծանրակշու, խնդիր, որքան այդ ձգտումների կանոնաւոր զարգացումն, որքան մանկան խաղերի ուղիղ առաջնորդութիւնը: Ասն զի միայն այդպէս են կարող կորա ձրդումները զարգանալ ծաղկել ու առօղջ պտուղ բերել: Այս, հարկաւոր է ուղիղ կերպով առաջնորդել մանկան խաղերը, վասն զի համառակ դիմուածում փոխանակ քաղցր պտղի, նոքա փուշ և տատասկ կը բերեն:

Այժմ տեսնենք թէ ինչ ձգտումներ են յերեան գալիս մանկան խաղի մէջ և թէ ինչպէս պիտի կազմակերպուած լինի ծաղկոցը, որպէս զի կարող լինի համապատասխանել եւը նպատակն, այն է, դաստիարակող գօրութիւն ունենալ:

I. Սուր աչքը կարող է գիտել, որ բացի կերակրի պահանջեց բոլոր երեխաները ունին չարժուած ու զութեան ձք գտու ծն: Մանուկը իւր կեանքի հենց առաջին օրերից սկըսած շարժում է, թափ է տալիս իւր ուներն ու ձեռները, առաջին տարուայ վերջին նա սկսում է չորեքթալթ տալ, երկրորդ տարին նա արդէն լաւ ման է գալիս, վագլում է և ցալիկում. իւրաքանչիւր ոք այդ գիտէ և տեսնում է բոլոր առօղջ մանկանց վերայ: Այժմ հարց է ծագում՝ թէ արդեօք ինչու բոլոր երեխաները ինչ բնէ ձգտում են շարժուելու. ինչ է դրա նպատակը: Հարկաւոր չէ երկար մտախոհութիւնն, որպէս զի համարանք որ այդ շարժողութիւնները հարկաւոր են թէ անդամների և թէ առ հասարակ բոլոր մարմնոյ կանոնաւոր զարգացման համար: Մանուկը սկսումը շարժում է իւր անդամները բոլորովին առանց մի օրեւ է նամատակի. սակայն ժամանակի ընթացքում նորա այդ աննպատակ շարժողութիւնից փոքր առ փոքր ձագում է իսկ և իսկ

գործողութիւն, այն է՝ որոշեալ նպատակի հասնելու դիտմամբ եղած գործողութիւն. այսպէս ահա օրօրոցի մանուկը անգիտակարար շարժում է իւր ձեռները և իւր ոտները. դիպուածաւ նորա ձեռնը դաշում է այս կած այն առաջկային և այն ժամանակը նա վորձելով իմանում է, որ մի քանի առաջկաներ իւրեանից հեռի են իսկ մի քանիսը մօտելի, որ դոցանից մի քանիսը ցաւ են պատճառում իւրեան, այսում են, այբու են իսկ մի քանիսը ընդհակառակն ցաւարեր հետեանք չունին և կակուղ են, մի քանիսը ծանր են և ինքը չի կարողանում տեղից շարժել, իսկ մի քանիսը թեթև են և ինքը կարող է բարձրացնել. մի քանիսը դառն համ ունին, իսկ մի քանիսը քաղցր: Այդ օրինակ գիտողութիւններ ձեռն բերելից յետոյ ահա մանուկը դիտմամբ ձեռը մեկնում է իւր առաջ ընկած մի կտոր շաքարը առնելով՝ ծանօթ լինելով դորա քաղցր համին: Այդպէս նաև սկզբումը մանուկը ոչինչ գիտակցութիւն չունի, որ ինքը կարող է մի տեղից միւս տեղը փոխուել, նա սկզբումը միայն անգիտակցար է շարժում իւր ուներն ու ձեռները, բայց երբ փորձը նորան ուսուցանում է, որ միայն ձեռներդ ու ուներդ շարժելով ես կարող վորխել քո տեղդ, մօտենալ մի առաջկային և հեռանալ միւսից, այնուշետև. նա սկսում է դիտմամբ շարժել իւր անդամները մի որշեալ նպատակի հասնելու համար:

Այդպէս ահա բոլոր մանուկները իւրեանց ծնուած օրեց ունին գործութեան մասն ձգտու ծն: Եւ ինչ է մարդկային կեանքը, եթէ ոչ գործողութիւն. առանց գործողութեան ոչինչ արգելուք չէր մնալ անցեալ մարդկութիւննից և սա երբէք չէր կարող հասնել արդի մտաւոր մշակութեան բարձր աստիճանին: Պարզ է, որ իւրաքանչիւր ծամարիտ դատիկակութիւն պիտի աշխատ լինի զարգացնել մանկան մէջ առ գործողութիւնն ունեցած ընդհանուր մարդկային ձըգտումն: Կոկ միայն մարմնոյ զարգացումը աչքի առաջ ունենալով՝ այս խնամատարութիւնը յերեան է գալիս հասակա-

որ անձանց համար երբեւ մաս մնամաժասգութեւն, իսկ ծագկոցի մէջ շաստական իւազերն են ահա, որոնք աշխատում են բաւականութիւն տալ այդ բնական պահանջնեն: Հին ազգերի պատմութիւնը մեզ մի և նոյնն է ասում: Հին Չինացիք, հին Պարսիկները, Յոյները, Հռովմայեցիք, Գեղմանացիք և շատ ուրիշ ազգեր ունեն իւրեան յատուկ մարմնամարզական խաղերը, որոնք մինչեւ այսօր անգամ վաճառ ձեւելով գոնում են վարենի ազգերի և ժողովրդեան ռամիկ դասի մէջ և որոնք այժմ լուսաւորեալ ազգերի մէջ դարձեն են մի որոշ նպասակաւ տեղի ունեցող գործողութիւն, այն է՝ երբեւ լինամատարութիւն մարմնոյ:

Ա. Ինչպէս մարմնոյ անդամների շաբժմունքն, այնպէս և մի ուրիշ ձգտումն է յերեան գալիս ծանկական հասակի մէջ, այն է՝ հոգով և աղալը, և կերպ փոստ փուելը, որ դժբաղդաբար շատ արգելքների է հանդիպում ծնողաց կողմից: Ո՞վ չի ցում իւր մանկութեան օրերեց, թէ ինչքան մեծ գուարծութեամբ ձեռներով հողն էր փորփրում, իւր համար փոքրիկ սրբահազ շնուռ, ածուներ (մարի, լաք) կագմում և բոյսեր անկում: Եւ չնայելով ոս այդ երկրագործութեան պահանջը մարդկային ազգի մէջ յերեան եկած առաջն ձգտումներից մէկն է, այսուամենայնիւ նա առ հասարակ մնում է առանց պարտուապատշաճ լինամատարութեան: Վասն զի հագիւ թէ մանկան մէջ յերեան է գալիս այդ հակումը, իսկոյն և իսկ ընկճումն է. «մի, ապաստիր շորերգ», այս է ահա մօր բարոյական գաղափարների առաջին պատգամը: Այդ ձգտման ամենից քիչ կարողանում են բաւականութիւն տալ քաղաքների, նա մանաւանդ մեծ քաղաքների երեխաները, որոնք ազատ հող չունենալու պատճառաւ յահախ փողոցներումն են գուարճանում գետինը փորփրելով: Բայց մենք չպիտի մոռանանք, որ այսուեզ մանուկը զրկում է այն գիտութիւններից, որոնք ապագայում նորա հոգեու կենաց մէջ պիտի կազմեն ամենազօրեղ տարբեր, նորա բոլոր

հոգեու կենաց հիմնը. վասն զի մասդոյս իւր մանկութեան օրերում սասացած տպաւորութիւնները անջնջ հետք են թողնում նորա մէջ, մինչդեռ երիտասարդութեան ու այրութեան հասակումն ձեռն բերածը շատ յոզդ յոզդ են լինուած ու խախուած: Մենք պիտի մանկան ենթարկինք նոյն իսկ բնութեան ազգեցութեան և թուլ տանք նորան զրապել բնութեան բերքերով, բացի գորանից նորա համար, որ միայն այն բանն է երկար ժամանակ գրաւում մանկան մատադրութիւնը, ինչ որ նա իւր սեպհական ձեռներովն է շօշափում: Ինչքան որ այդ հոզ փոխիրելը, պարտէզ շնորհը աննշան չ'երեւաց, այսուամենանիւ նա կազմում է այն, որով առաջին անգամ կարելի է դառնուում մանկան ուշագրութիւնը գարձնել բնութեան բերքերի վերայ և այգաէս արթնացնել նորա մէջ սէց դէպի երկրագործութիւնը: Մանկան այդ ձգտումը մենք չափաւուի առանց ուշագրութեան թողնենք, վասն զի հակառակ գիտուածում նա շուտով կանչեանայ, վասն զի իւրաքանչեւը զօրծութիւն առանց գործագրութեան մնալով կընկճուի ներմի ծանրութեան ներքոյ, որ և իւրեւ ծուլութիւն, իւրեւ հեղգութիւն յերեան է գալիս մանկանց ու հասակաւոր անձանց մէջ: Սա գորա բացաւական մնան է, դրական վրանար կայանում է նորանում, որ մանկան համար անհետ կորչում է բնութեան, այն է՝ մարդու առաջին և ամենամեծ ուսուցչի գիտութիւնը, որ նորա արդինքները ըմբռոնում են միայն վայր նի վերոյ և մնում առանց լարատե ազգեցութեան. վասն զի եթէ նա, մանուկը, գիտուածու ծաղկիներ էլ քաղելու լինի, այս կամ այն բոյսը ժողովելու լինի, ու այն միայն մի խաղ և երեկք առելու չի լինի երեւելի ծանրակշնուր գիտութեան: Ուրիշ բան է, երբ երեխան պարտիգում ունի իւր սեպհական ածուն և սովորում է բահեւ ցաքանել, ջրել և անհամբեր սպասում է թէ ինչպէս պիտի բանէ իւր ցանած սերմը, ինչպէս պիտի ծէ, կոկոն բռնէ և ծաղկէ, երբ նա ուրախ ուրախ գաղում է իւր ցանած

ծաղիկը, որ բերէ և մեծ հրճուանքով տայ իւր ժօրը: Այս, ով որ դիտել է անմիջապէս թէ ինչ ուրախութեամբ է լրցնում մանկան միրտը, երբ նա աշքեռը պլած զննում է իւր ցանած սերմի ծլելը, երբ նա դիտում է թուշունների ձագերին իւրեանց բունում ծլալալիս, ծաղիկները ծծող մեղուներին, թթուուններին ու բգէզներին, երբ նա իւր ձեռին բռնած կոտրատում է ցորենի հասկը, որ տեսնէ նորա մէջ թաք կացած հատիկները, մի խօսքով երբ նա ինքն իւրեան գրտնում է շշջապատուած բնութեան հրաշալիքներով, — ով որ դիտել է այդ բոլորը, նա կը համոզուի, որ բնութեան հետունեցած անմիջական հաղորդակցութիւնը մանկան առաւել և առաւել է տալիս, առաւել է ուսուցանում, քան ծառաներն ու գուլերնանտները, քան գրքերն ու դպրոցը:

III. Ծաղկոցը միշտ աչքի առաջ ունենալով մանկան բնատուր ձգտումները, աշխատում է զարգացնել նաև նորա զգայարանները, որոնց խնամատարութիւնը շատ և շատ ծանրակիւր է մարդոյս մտաւոր կազմակերպութեան համար, վասն զի նոցա միջնորդութեամբ է մարդս ըմբռնում իւր բուրը հոգիոր կենաց տարրերը: Ա. Եւ բնութիւնը այսուեղ առաջնորդ է լինում մեզ ամենուրեք: Ամենայն ոք նկատած կը լինի թէ ինչպէս մի քանի ամսական երեխան ամսուր բռնած պահում է իւր մօր մատը կամ մի ուրիշ առարկայ: Գորսանով է սկսում մանուկը առաջին անգամ ծանօթանալ զանգան առարկաների հետ և վարժել իւր դեռ ևս անփորձ ձեռք, ուրով նա մի ժամանակ հում նիւթից գանագան բաներ պիտի մշակէ: Զեռը մարդոյս ամենանգամ անգամ ծանօթանալ զանգան առարկաների հետ և վարժել իւր դեռ ևս անփորձ ձեռք, ուրով նա մի ժամանակ հում նիւթից գանագան բաներ պիտի մշակէ: Զեռը մարդոյս ամենանգամ անգամ ծանօթանալ զանգան առարկաների հետ և վարժել իւր դեռ ևս անփորձ ձեռք, ուրով նա մի ժամանակ հում նիւթից գանագան բաներ պիտի մշակէ: Առանց ձեռների մարդու ոչինչ չէր կարող գործել կամ շինել, նոքան ծառաւայում էն նորան երբեք միշտ մեծ մեղուններից մէկն է, բնութիւնից նորան պարզեած արքունի գաւագաններն է: Առանց ձեռների մարդու ոչինչ չէր կարող գործել կամ շինել, նոքան ծառաւայում էն նորան երբեք միշտ մեծ մեղուններից մէկն է, բնութիւնից նորան պարզեած արքունի գաւագաններն է:

ուած են կողում արտաքին իրերին մի ուսուեալ ձև տպակ ցանիութիւնն ու ձգտումը, որոնք գրգռում են հասակաւոր մասղեն կերպարանափոխել բնութեան բերքեալ և ուսոնք պատճառ եղան արուեստների ծննդեան ու կատարելագործ ծութեան: Այդ ձգտումն է նա և այն բնական դրդից գօրութիւնը, որ մարդոյս բարձրացրաւ իւր վագրենի գրաւթիւնից և հասցըաւ այժմեան քաղաքակրթութեան բարձր աստիճանին: — Մինչև հիմայ կը թութիւնը ոչինչ չէր անում մանկան այդ ձգտումը զարգացնելու համար նորա կենաց առաջին տարիները, մինչգեռ գա այն ժամանակն է, երբ ամենալազոզ կերպով կարել էր վարժել մանկան ձեռք, երբ նորա ձկում ու փափուկ անդամները բնդունակ են ամեն տեսակ վարժութեանց և երբ նորա ստացած տպաւորնութիւնները անջնջ մնում են և կազմում նորա բոլոր հոգեւոր կենաց հիմնը: Եթէ մենք զանազան մանկանց ձեռները միջեանց հետ բաղդատելու լինինք, այն ժամանակ կը տեսնենք, որ բոլորովին ուրիշ է լինում այն մանկան ձեռների կազմութիւնը, որի ծնողները կամ դաստիարակները նորա կեանքի առաջին օրերից սկսած խնամք են տարել այդ մասին, մինչգեռ անխնամք թողնուած և փողօցում մեծացած տղաների ձեռներն ու մատները այնքան փափուցած ու բրտացած են լինում, ոչ նոցա կեանքի լածորդ տարիներում լածախ ի գութ են անցնում ամենայն աշխատանք ձեռագործութեան, նութի արուեստների, նուագածութեան մէջ լաջողակութիւն ձեռն բերելու: Այդ պատճառաւ և Ֆրէնքլի ու միայն իւր մարդ նամարգական խաղերով աշխատում է վարժել առ հասարակ մարմնու միկանունքները, այլ նա ձեռքեցի համար նշանակած ունի առանձին վաժութիւններ, որոնք սկսում են օրֆորցից և դաւնում այն միջոցը, որով կը բան ծանօթանում է իւր շշջապատոկ առարկաների հետ: Բայց այդ բաւական չէ: — Ծաղկոցը իւր այդ վարժութիւններով աշխատում է վարժել երեխական ինքն քնար ծանօթանում է իւր շշջապատոկ առարկաների հետ: Բայց այդ բաւական չէ: Ծաղկոցը իւր այդ վարժութիւններով աշխատում է վարժել երեխական ինքն քնար ծանօթանում է իւր շշջապատոկ առարկաների հետ:

թես գանազան բաներ շինել առարկվէ: Մարդկութիւնն էլ իւր ձեռներից օգուտ քաղեց առաջին անգամ իւրեան համար բնակարան և գգեստներ շինելիս: Եւ քանի առաջակ փոփոխութեանց ենթավկուեցաւ մարդոյս բնակարանը սկսած այն ժամանակիներից, երբ մարդկութիւնը վարենութեան մէջ էր ապսում, մինչև այժմեան մեծամեծ քաղաքների շրեցազարդ պալատներն ու գգեստները: Մի և նոյն այդ ճգուտմը տեսնում ենք նաև մանկան մէջ, երբ նա հոգը փոթիւնով, սենեակի մի անկիւնումը ալթոններ շարերով, կամ իւր ձեռի տուփը գանազան մասների բաժանելով շինում է աներ, պարտէզներ, կամուրջներ, համբ բուներ և այլն: Եւ ինչպէս է օգուտ քաղում Ֆրէօրէլը մանկան այդ հակումից, նորան ինքնագործութեան մէջ վարժելու համար: Կա իւր ծաղկոցում երեխաներին տալիս է գանազան նիւթեր, օրինակ խորանարդներ ձողիկներ, գոյնզգոյն թղթեր, զանազան ձեփ տախտակիներ, որնցից երեխանները շինում են, հիւսում, կարում և ասղնագործում հապար ու մի տեսակ բաներ: Որպէս զի երեխաները յաջողակութիւն ստանան ամէն տեսակ ձեռագործութեան մէջ, Ֆրէօրէլը նոցա առաջնորդում է թղթից բազմաթիւ բաներ շինելու—թուզլը ծալցւելով, ծակծակելով, կարելով և միմեանց հետ հիւսելով: Առ հասարակ ձեռները միւս զգացարանների հետ վարժուած են ամեն տեսակ գործի համար, ինչպէս որ և այդ պահանջում է իւրաքանչիւր անձի գործական կեանքի համար հարկաւոր ընդհանուր յաջողակութիւնը:

Սակայն այդ օրինակ աշխատութեանց ամենաշահաւոր և անփոխարինելի նշանակութիւնն է նոցա բարուական ազգեցութիւնը: Մանկան այդքան վաղ աշխատութեան ընտելացնելով և նորա մէջ զէպի աշխատանքը սէր ծնուցանելով, մենք կը տանք նորան մի ճշմարիչ պահապան հրեշտակ, որ ապագայում նորտն գերծ էր առաջանակ աշխատական ախտերից: Ման-

կան կեանքը պիտի սկսուի պարտաւճանացութեամբ, եթէ յիշաւի նոցա առաջաւ կեանքը պիտի լինի բարօւական և որպէս զի մարդու կարող լինի կատարել իւր պարտքը նա պիտի բնդութեան լինի նաև այդ կատարելու: Եւ ծագկոցի գլխաւոր նպատակն էլ հենց այն է, որ երեխային իւր կեանքի առաջին տարիներում ընդունակ գործէ իւր պարտքը կատարելու: Ֆրէօրէլը լուս հասկացաւ, որ անկարելի է հասնել այդ նպատակն, ստիպելով մանկան պարզել այս կամ այն բանով, վասն զի միան նա է կարող բարուականացուցիչ ազգեցութիւննեւ մանկան վերաւ, ինչ որ նա հաւանում է, ինչ որ գրգռում է նորա երեակայութիւնը ու հետաքրքրութիւնը, ինչք որ նա ամհնատուր է լինում իւր բոլոր հզգով: Եւ զայ միայն այն ժամանակն է անդի ունենում, երբ նա գործում է այն, ինչ որ նորան ուրախավելին է պատճառուում, երբ նա տեսնում է որ հշմարիմ ինքը մի բան է շինում: Եւ Ֆրէօրէլը խաղերի ամենահանձարեղ կողմն ու տատճառակութիւնն էլ հենց այն է, որ նորա արգէն թուրբակազմ մանկան համար կարելի են շինում այդ սահ զ ծ ո զ գ ո ս ծ ո զ ո ւ թիւն ո, որ նորա արթնացնում են ու զարգացնում մարդկային ստեղծող հզգույ առաջին սերմերը, հնարագիւտ գորութիւնը և փոխանակ լոկ նմտնութեան յուսով կամելի են գործում մանկան ինքեան հնարել և շինել գանազան բաներ: Ֆրէօրէլը խաղերը կոսկու ձեռներով մեն շաշափում մանկանց առանձնայտակութիւնները նորա ընդհակառակն լայն ասպարէզ են տալիս երաքանչիւր մանկան ազատ կերպով յերեան բերել և վարժել իւր ներքին ձգուունները: Այդպէս աշա երաքանչիւր սանիկ միենոյն ձողիկներից ու խորանարգներից, միենոյն կուլց ու թղթի կոտըներից շինում է կամ հիւսում ինչ կամ մինչեւում է, մինչդեռ առօրեայ սովորական խաղալիքները գուրի են այդ յատկութիւնից: Նորա են և մնում են միշտ մի և նոյն ամեն մի մանկան համար, որ զբաղւում է նոցանով—ուրեմն և չունին ոչինչ ներքին արժանաւորութիւն:

Բ. Բայց Ֆրէօրէլը իւր ծաղկոցում ոչ թէ միայն աշխատում է զարգացնել մանկան ձևաքի յաջողակութիւնը, այլ նա իւր խաղալիքները շնուռմ է գեղեցիկ զարոց գիտութիւն հայթհայթելու, կամ առաւել պարզ՝ իւր տեսածը հայութեամբ ընթանելու համար։ Այդ նամատակաւ նա դուրս է բերում մանկանց առաջ այնպիսի առարկաներ, որոնք իւրեանց յատկութիւններով հակադիր են միմեանց։ Պարզեմ միտքու Յուկանի է որ երտիան աշխարհի իւրաքանչիւր առարկայ կազմուած է մի որ և է նեւթից, ունի մի որ և է մեծ ութիւն, ձեւ, գոյն ու ծանը ութիւն։ Իւրաքանչիւր առարկայ ընդունակ է մի որ և է ձայն հանելու, նա կազմուած է լինութ պանազան մասն երից, այդ մասներն ունին զանազան ուղղութիւնն տարածութեան մէջ և կարող են որ ուղուել թուլով։ Բայց այդ ընդհանուր յատկութիւններից զանազան առարկաներ ունին և իւրեանց առանձնայատկութիւնները, ինչպէս են օր, Համ, Հոտ, թափմանցիկութիւնն և այլն։ Բայց այդ յատկութիւնները մի քանի առարկայի վերայ իւրեան են դալիս ամենաբարձր աստիճանաւ, իսկ մի քանին վերայ ամենացածը։ այսուամենայնիւ կան և այնպիսի առարկաներ, որոնք ընկած են այդ երկու հակադիր կէտերի մէջ։ Այդպէս ահա բայց ամենամեծ ու ամենափոքրեկ առարկաներից կան բազմաթիւ մեծութիւն ունեցող առարկաներ, ամենամուժ ու ամենասպարզ գոյները միանում են բազմաթիւ աստիճաններ մթութիւն կամ պարզութիւն ունեցող գոյներով։ Կամ առարկաներ, որոնք ունին միայն մի տեսակ կամ չափից գուրս բազմատեսակ արտաքին ձև, օր. կողեւ, անկիւններ, բայց կան և այնպիսիքը, որոնք այդ դիտմամբ ոչ այնքան պարզ են ոչ էլ այնքան բարդ։ Մի առարկայ ուասն անգամ ծանը է իւր հակադիրից, բայց միան 9, 8, 7, 6, 5... 2 անգամ ուրիշ առարկաներից։ Մի և նուն էլ կարելի է ասել նաև ձայնի, թուլով մասների դրութեանց և ուղղութեան վերաբերութեամբ։

Այդ հակադրութեան օրէնքի գործադրութիւնը ոչթէ միայն նպաստում է առարկաների յատկութեանց ուսումնասիրութեան, այլ նա փոքրեկի, գեռ ևս անվարժ մանկան համար կարելի է կացուցանում կազմել և մինչեւ անգամ ինքնին գանել բազմաթիւ կանոնաւոր ձևեր։ Ով եղել է ծաղկոցներում և քննող աշբով դիտել է այս օրէնքի գործադրութիւնը, նա կը խոստովանուի, որ ոչինչ ակնքան պարզ և մանկան մտաւոր կարողութեան հասանելի միջոց չի կարելի գտնել ինչպէս են այդ վարժութիւնները, դոցանոլ ֆրէօրէլ լիրակի գտել է և գործադրել մարդկային գործունէութեան ընդհանուր օրէնքը։ Դա այն օրէնքն է, որով մանուկը կը թոյլ ոյժերով շինում է, այն ստեղծում է հազարաւոր բաներ, ինչպէս մի բանաստեղծ։ Եւ աշխտեղ մանկան ստեղծող գործունէութեան նպաստում է նա մանաւանդ մի շատ ծանրակշիռ ուղղեցոյց, այն է ֆրէօրէլ ցանցը Ծաղկոցի սեղանների, իսկ յետոյ, քարետախտակների երեսը հորիզոնական և ուղղացեաց գծերով բաժանուած է փոքրեկի քառակուսի տարածութեանց։ Այդպէս կազմուած ցանցը աշա ծառայում է երեւ մի առաջնորդ փոքրեկի խորանարդներով, ձողիկներով, գծերով զանազան առարկաներ շնորհիս կամ գեղեցիկ նկարներ գծագրելիս։ Այդ ցանցի միջնորդութեամբ 4 տարեկան երեխան օր, կարողութիւն է ստանում իւր խորանարդներով ու ձողիկներով շնորհ սեղան, աթոռ, տուն, ամբող, ապարանք, եկեղեցի, խաչ, շոգեկառք, կամուրջ, սանդուղք, մի խօսքով արուեստների ամեն տեսակ արդիւնարերութիւնք, բայց նաև բազմաթիւ ճաշակը նըրացնող գեղեցիկ ձևեր ու նկարները Վեց կամ եօթը տարեկան երեխային այդ ցանցը ծառայում է երեւ մի գեղեցիկ առաջնորդ, երբ նա ասեղը կամ քարե գրեշ իւր ձեռին թուղթը ծակծակելով, զիւսելով, կարելով կամ գծերով նկարում է հազար ու մի շքեղ առարկաներ, կահ կարասիներ, զարդեր, շնութիւններ, ծաղիկներ, թըռաչուններ ու կենդանիներ, և այդպէս իւր աչքով տեսամբ, իւր

ձեռքով շօշափածը առաւել ամուս տպաւորում իւր քնքոյց
մաքի մէջ:

Բայց ծաղկոցի այդ պարապմունքները ունին մի ուրիշ
առաւել մէծ ներքին արժանաւորութիւն: Փոքրիկ երեխաւոց
որպէս և հաստկաւոր անձանց համար պարապմունքն է վատ
ցանկութիւններից ու կամքերից, մարդուս բնութիւնը ալտե-
ղող գործերից հեռու պահող, ուրեմն և բարոյականացուցեց
միջոցներից ամենաընալիքը: Գործն է մարդուս պահապան հր-
բեշտակը, անգործութիւնն ու պարապութիւնն այն չար
սատանան, որ մէկը միւսի ետեւոց հազարաւոր անձինք լան-
դունի է գլուխում. գործն է մարդուս փրկիչը, վասն զի մար-
դուս բնութիւնը գործ է պահանջում, վասն զի նախախնա-
մութեամբ որոշուած նախասակին մարդս միւսին գործով է կա-
րող հասնել: Այսու ամենայնիւ պարապմունքը միայն այն ժա-
մանակն ունի կրթուզ ու բարոյականացուցչը ներգործութիւն,
երբ մարմնոյ և հոգու բոլոր ուժերը շարժողաւթեան մէջ է
գնում, երբ նու ծշմարիս ինքնագործոնութիւն է: և այդ-
վերե յառաջ բերած խողերի ամենագլխաւոր նախասակին է
արթիացնել մանկան մէջ ինքնագործօնութեան ոգին, այն է՝
կարելի կացուցանել առանց ուրիշի օգնութեան կազմել, շե-
նեւ որինել և հիանալ իւր ձեռի գործով:

Սակայն Ֆրէօբէլը իւր վերև յառաջ բերած խաղերով
աշխատում է ու թէ միւսին վարժել մանկան ձեռներն ու աչ-
քերը, այլ նա կազմակերպում է նորա լեզուն և հարստաց-
նում նորա գիտութեան պաշարը: Այդ նախասակաւ Ֆրէօբէլը
զբաղեցնելով իւր սանիվին բազմաթիւ իրերով, մի և նոյն
ժամանակ միջոց է տալիս նորան անմիջապէս ծանօթանաւ
այդ առարկաների հետ, նորա ուշագրութիւնը զարձնելով
գոյա առանձնայակութեանց վերաբէ: և այդ վարժունքը
շատ համապատասխանում է մանկանց բնական ձգտման, ոս
և երեւում է այն հարցերից, որոնք առաջարկում են նոքա-
խրաֆանչիւր նոր առարկայ տեսած ժամանակ: «Այս թնչ է,

ինչիցէ, ո՞ս տեղից է, ինչու համար» կը լսէք դուք ամէն մի
երեխայի բերնեց: Ուստի և իւրաքանչիւր անգամ, երբ մա-
նուկը մի նոր առարկայ է ստանում իւր պարապմանց համար,
վարժուցին մի քանի դասերի ընթացքում նորան սոլորաց-
նում է, որ այդ նոր խաղալիքը օք. մի խորանարդ է, շնու-
ած է փայտից, փայտը ստանում ենք ծառերից, այնուհետեւ
— խորանարդը ունի 6 երես, կրաքանչիւր երես ունի չորս ան-
կեն և չորս կող: Մի և նոյն կերպով ուսումնասերւում են
նաև առարկայի միւս յատկութիւնները, այն է գոյնը, ծան-
րութիւնն ու մեծութիւնը: Խոկ երբ երեխան ծանօթանում է
նա և այդ առարկայի գործադրութեան հետ, այն ժամանակը
նա պատասխանում է նաև այս հարցմանս թէ «ինչու համար
է խորանարդը»: Այդ կերպով ահա ծաղկոցը դառնում է մի
գեղեցիկ գպրոց, ուր երեխաները բոլորովին աննկատելի կեր-
պով հայթհայթում են ամեն գիտութեանց տարբերը և կա-
րութիւնն ստանում իւրեանց դիտածը առանց դժուարու-
թեան լեզով արտայալուել, որ հազիւ է յաջողուում շատ հա-
սկաւոր անձանց:

Գ. Բայց Ֆրէօբէլի ծաղկոցը չի շատանում միայն շօշա-
փելեաց, անսանելեաց ու լեզուի վարժութիւններով, այլ նա
առանձին ուշգ է գարձնում նաև ականջի զգայութեանց վե-
րայ, օգուա քաղելով այն բնական հակումից ու սիրուց, որ
երեխաներն ունին առ երգն ու հէքաթները: Նա համարեալ
իւր բոլոր խաղերը, նա մանաւանդ մարմնամարզական ու շար-
ժական խաղերը կապակցում է երգի հետ: Եւ որպէս զի այդ
խաղերը աւելի հետաքրքրելի դառնան մանկանց համար, նա
նոցա տալիս է թատերգութեան ձեւ, ներկայացնելով
կեանքից կամ բնութիւնից առնուած զանազան տեսարան-
ներ: Այդպէս կազմակերպուելով շարժական խաղերը ոչ թէ
միայն վարժում են երեխաների լսելիքը, այլ յագեցնում են
նաև շափառ գործելու, շարժուելու և երգելու ներքին պա-
հանջը որ և տեսնում են թէ բարձրացնելու անձանց և թէ



օրօրոցի մանկանց մէջ: Նոյն իսկ արդ պատճառութ կըքարանը մը երեխայ սկզբում է ոտանաւորներ, մինչև անդամ իւրեան համար անհասկանալի ոտանաւորներ, նոյն իսկ արդ պատճառութ նա առաւել շատով է բարանում, առաւել երկար է պահում իւր լեշողութեան մէջ երգերն ու ոտանաւորները, քան պատճամ լիչպէրը: Եւ Թթէօբէլը մանկանց այդ առ բանաստեղծութիւնն ունեցած սէրը լագեցնելու նպասակաւ ութէ միայն սովորացնում է նորանց զանացան երգեր, հանելուկներ, այլ պատճում է նաև հէքաթներ, երբ նոքա սաւրապում են մի գործով: Այսուանենայնիւ եթէ ուշի ուշով քննելու լինինք կը տեսնենք, որ Թթէօբէլի ծաղկոցը առանց դորան էլ ամբողջապէս մի բանաստեղծութիւնն է ներկայացնում մանկան համար: Այսուեղ ամեն կողմից գրգռում է մանկան գեղեցկութեան ձաշակը թէ նոյն իսկ բնութեան ագրեցութեամբ, թէ զանազան շքեղ առարկաներ ու գարգեր շնել ու նկարել ասալով և թէ հէքաթներ, ոտանաւորներ ու երգեր ուսուցանելով: Բարոյական գաստիարակութիւնը ովնչ այնքան ազգու միջոց չե կարող ձարել մանկանց չար ցանկութիւներից հեռու պահելու համար, որքան որ աշխատելով լագեցնել մանկանց առ գեղեցին ունեցած սէրը: Մարդու հոգին անշարժ չի մնում, նա բաւականութիւնն է որոնում իւր հակմանց համար և պիտի որոնէ, որ և գտնում է կամ ցոփութեան, գեղխութեան, շաւալութեան և ամեն աեսակ բարոյական ալսուերի մէջ կամ ընդ հակառակն վերացականի ու եթէ աւականի մէջ: Այս, գեղութուեստները մէծ նշանակութիւն ունին մարդու բարոյական գաստիարակութեան համար: Եւ դա վերաբերում է ոչ թէ միայն երեխաներն, այլ և ամբողջ մարդկութեան, որ իւր կոստութիւնից ու բարբարոսութիւնից բարձրացաւ ու հասուած ամենին միայն երեխաներն, այդ և ամբողջ մարդկութեան միայն միայն երեխան կոստութիւնից ունեցած մասւու աշխան մտաւոր մշակութեան աստիճանին միայն իւր առ գեղեցին ունեցած բնական ձառումը: Մարդկութիւնը սիզումը շատցած կանգնած էր բնութեան առաջ յետու հիացած էր առաջական գեղեցիններով՝ փո-

քը առ վոքը սկսեց նմանուել նորան և արդպէս ահա յառաջացան Հնդկաց, Բարելացւոց, Ասորւոց, Եգիպտացւոց, Յունաց և ուգիչ ազգերի գերահրաշտաճարները, արձանները, բուրգերը, կոթողները և դոցա անմահ բանաստեղծութիւններ, գորանեց յետոյ միայն մասզիութիւնը քննող ազեց բնութեան և իւր կեանքի վերջին նպաստակի վետայ, գորանից յետոյ միայն ծնուեցան փելիսովիաները: Այժմ կարծեմ հասկանալի է, թէ ինչու Թթէօբէլը այնքան մէծ նշանակութիւն է տալիս բնութեան և արուեստների արդիւնքների մէջ եղած գեղեցիկին, ինչու նա այնքան շատ հիւսել գծագրեւ ու ազնագործել է տալիս իւր ծագկոցում և ինչու նա երեխաների երկակայութիւնը այնքան գրագեցնում է հէքաթներով, ոտանաւորներով ու զանազան երգերով: Այժմ, կարծեմ, հասկանալի է, որ մերին աստիճանի անբնական բան է շարժել մանկան մտածական կարողութիւնը այն ժամանակի, երբ նա, մանուեր, ամբողջապէս ապրում է երկակայութեան փայփայանց մէջ, որ մանկական հասակում դաստիարակող գորութիւն ունին ոչ թէ գրքերը և ուսուցչի ամբիոնից արտասանած անհասկանալի ու փորուած բառերը, այլ ձամարիս, շոշափելի իւրերը, այլ գեղեցին ու բարելու անմիջական դետողութիւնը:

Ծագկոցի այդ սիրտ մշակող ու բարօյականացուցիչ ազդեցութիւնը առաւել գօրեզանում է նա մանաւանդ նորա ներքին կազմակերպութեամբ: Մարդկարին ազգի պատճութիւնը մեզ ցուց է տալիս, որ մտաւոր մշակութիւնը անկարելի է առանց ընկերական կենաց, որ բարօյականութիւնը սկսում է և զարգանում միայն երբ մարդկա ապրութիւնից է ամբողջութեան, օր՝ ընտանիքի, հասարակութեան, կամ ազգի: Եւ այդ ընկերական կեանքը մի բնական պահանջ է մասզիութեան համար: Մարդիկ մինչեւ անդամ վայրենի դրութեան մէջ ապրել են և ապրում են ոչ թէ առանձին առանձին, ինչպէս

անասունները, այլ խումբերով։ Նոքա բնագդմամբ միանում են միմեանց հետ և կազմում ընտանիքներ, գեղեն, քաղաք-ներ և ամրող ազգութեաններ։ Մեր ժամանակները հասարակութեան համարեա բոլոր ներթական շահերը պահանջում են բազմաթիւ անձանց ընկերակցութիւն։ Մարդեկ, հասնելով մտաւոր զարգացման առաւել բարձր աստիճանին, հասկացան որ բազմաթիւ անհատների միութիւնը կազմում է մի անընկելի գործիւն, որ մենք այն ժամանակն ենք կարողանում առաւել մեծ յաջողութեամբ ընդուժալը եւ կենսական փոթորիկների աւերիչ ազգեցութեան, երբ բազմաթիւ ոյժերը միանում են միմեանց հետ, երբ մենք ամեն մէկս չենք գործում առանձին։ Ուստի և ամենուրեք կազմուցան հազար որ մի ընկերութիւններ։ Միայն ափսոս որ մի և նոյնը մենք չենք տեսնում առաւել բարձր, եղէալական, նա մանաւանդ բարօյական շահեսի գիտմամբ, թէ և գիտութիւնները նոյնակս սկսել են օգուտ քաղել բազմաթիւ անձանց ընկերութիւնից առաւել յաջողութեամբ զարգանալու համար։ Այդ զգալի պակասութիւնը տեսնում է նա մանաւանդ մեր Հայերս վերաբերութեամբ։ Մենք ոչինչ ընդհանուր ոյժ չենք գործ գնում ոչ թէ միայն բարձր, բարօյական գաղափարներին հասնելու համար, այլ գուրկ ենք մինչև անգամ այնօրինակ ընկերութիւններից, որոնք ծառայում են մեր ներթական շահերին։ Սակայն մեր ժամանակը պահանջում է, որ Հայ երեխան դաստիարակուի Հայ կեանքի համար, որ նա ՚ի մանկութենէ իրեւ անդամ մի հասարակութեան ուսանի պարտականութիւններ կատարել, կարճ—ընդունակ դառնայ լրացուցանել Հայ հասարակութեան ամեն մի պահանջ։ Եւ որպէս զի այդ իրագործուի, Հարկաւոր է Հայ մանկան տալ Հայ հասարակութեան կեանքին համապատասխանող մի ընկերութիւն, վասն զի ոչ վորոցի երեխաներն են կարող այդ պաշտօնը կատարել, ոչ օտարազգի աղախինները, ծառաներն ու գումբելնանտները, ոչ էլ մի քանի ընտանեաց յարաբերու-

թիւնքը, մինչև անգամ եթէ դոքա ոչինչ անբարոյականացուցիչ ազգեցութիւն չունենան մանկան վերայ։ Մենք միան այն ժամանակը կ'ունենանք հշմարիտ բարօյական, ոչ անձնամոլ կամ օտարասէր, այլ անձնուրաց ու բարձր գաղափարներին ծառայող անձինք, երբ մեր որդեքը իրեանց մանուկի հասակից սկսած կապին բարօյական պահանջներին համապատասխան մի հասարակութեան մէջ։ Եւ մանկան մէջ ընդհանուր մարդկային գգումներից ոչ մէկը այնքան վաղ չի երևան գալիս, որչափ այդ հասարակական կենաց պահանջը։ Արդէն օրօրոցի երեխան է աղաղակ բարձրացնում, երբ նա իրեան միայնակ և առանձնացած է գտնում, իսկ երբ նա մի որեւ է ուրախ ձայն է լսում, իսկոյն հանգստանում է, վասն զի այժմ ինքն իրեան գգում է հասարակութեան մէջ։ Այսուամենակիւ վերև յառաջ բերած նպատակին հասնելու համար բաւական չէ գեռ ևս Հասարակաւորների ընկերակցութիւնը երեխաւի համար հարկաւոր են երեխաներ, վասն զի միայն երեխաների մէջ է նա ազատ շարժում և սովորում ենթարկուել հասարակութեան շահերին, իրաւոնքներ յարգել և իրաւոնքներ պահանջել։ Հասարակաւորների մէջ նա ընդհակառակին ընդունում է մի սոսպարենալ դերք, ծնողաց միայնակ գաւակը միշտ մնալով նորա հնա, առ հասարակ իրեան վերաց կրում է միայնակեցութեան կնիքը, ըստ մեծի մասին լինում է ինելօք ինելօք խօսող ժամանակից առաջ հասունացած և զուրկ հշմարիտ անմեղութիւնից։ Այս, երեխաւի բնաւորութիւնը միայն երեխաների մէջ է կազող կազմակերպուել, վասն զի ընկերական կեանքը նորան ուսուցանում է, որ չես կարող անպատիժ գործել, ինչ ոս ուզում ես, որ հշմարիտ ազատութիւնը պահանջում է ենթարկուել օրոշիւալ օրէնքների և յարգել ուրիշների իրաւոնքները։ Ասւ կազմակերպուած ընկերական կեանքի մէջ անզուսպ ու կոպիտ ընաւորութիւնները մեղմանում են, եսամոլը հանացում է ուրիշների արժանաւորութիւնները, հպարտը հեղանում է, վասն

զի նոքա այստեղ միջոց են ստանում բաղդատել իւրեանց անձն ու գործը իւրեանց ընկերակեցների ու նոցա գործերի հետ. վասն զի երեխան, երբե մի նորատումի ծառ, քանի քնքոյշ է, շուտով է ուղղում, իսկ երբ նա մեծանում է և աճ- րանում է, այնուհետեւ զատկարակութեան ազդեցութիւնը կամ շատ չնշին է լինում, կամ բորբովին անզօր. Բայց և այս էլ չը պիտի մոռանանք, որ երեխան իւր հասակում ինչու բարին ալճախ և չարն է շուտով ընդունում, որ նորա բնաւո- րութիւնը վատ հասարակութեան մէջ շատ շուտով է աղա- ւաղում, նորա մէջ շատ շուտով է արժատ բոնում ամեն տե- սակ չար սովորութիւններ ու ցանկութիւններ, որ նա մնա- լով ծառաների, աղախինների կամ փողոցի երեխանների ըն- կերակցութեան մէջ, շատ շուտով է ընդունում նոցա մէջ տա- րածուած բարուական ախտերը. Այս խօսքերը ասելիս ևս աչ- քի առաջ ունեմ նա մանաւանդ մեր Տիֆլիսը. Այստեղ հայ բնաւանիքը իւր վերայ չէ կրում այլ ևս չին նահապետական կնիքը, երբ մայրը վզապատուած իւր երեխաններով բրինձ էր ընտրում. Հաւերին էս կուտ տալիս, երբ նա իւր երեխանների հետ միասին բանջարանոցումն էր բանում, ածուներ շինում և զանազան կանաչով ցանում, երբ երեխանները խումբ խումբ անտառ էն դիմում զանազան պատզներ ու մրգեր ժողովելու և ամենայն հրձուանքով բերում էին իւրեանց մօրը տալիս ձմեռուած պահելու. Մեր այժմեան բնաւանեկան կեան- քը շատ հետացած է ընութիւնից ու պարզ կենցազավարու- թիւնից. մեր երեխանները այժմ զբաղուած են շինազարդ զգեստներով ու շաքարեղիններով, նոքա իւրեանց մատաղ հասակից սովորում են անգործ անցնել իւրեանց օրերը և միշտ հետի մաւալ ծանր աշխատութիւններից. Նոքա զուրկ են իւ- րեանց հօր հեղինակութեան ազդեցութիւնից, վասն զի նա ծանրաբենուած զոլով արտաքին գործերով անկարող է ան- միջապէս հսկել իւր երեխանների մտաւոր ու բարոյական զա- տիւարակութեան վերայ. նոքա զուրկ են ըստ մեծի մասին

նաև իւրեանց մօր գորովագութ փայփալաներից, վասն զի նա առաւել լաւ է համարում երեխային յանձնել գորկւնանու- ների կամ ծառաների ու աղախինների ընկերակցութեան և որոնել իւրեան համար մի հասարակութիւն, ուր կարող էր զուարձութեամբ անցնել լուր՝ շատ անգամ անգործութիւնից տաղակացուցիչ ժամերը, տանը նստել իւր երեխանների մօս և զբաղեցնել նոցա. Եւ երբ դորանից յետոյ մեր երեխանները դուրս են գալիս ապականուած տեսակ տեսակ բարոյական ախտերով և անընդունակ ծանր աշխատութեանց, միթէ դո- րանից յետոյ մենք, հայրերս ու մայրերս, իբաւունք ունինք արտնչալ մեր բախտի վերայ. Միթէ դորանից յետոյ մենք ե- րաւունք ունինք պախարակել մեր օրգուն, երբ նա ոչինչ լր- սել չի ուզում, այլ վարում է մի անգործ ու զեղի կեանք: Այս մարդոյս առաքինի ու չարաբարոյ շինողը այն հասարա- կութիւնն է, որի մէջ նա մեծանում է: Տուժք ձեր երեխաննե- րին լաւ կազմակերպուած ընկերութիւն, այն ժամանակը և դուք յետ կ'ստանանք մի առաքինի մարդ, ազատ ամեն չար գործերց. Թողեցիք ձեր երեխաններին աղախինների ու ծա- ռանների հասարակութեան մէջ, այն ժամանակը հաւաստի եկէք որ ձեր գիշած հարստութիւնը յօքը պիտի թնդայ, հա- զաւոր տարիններով պահպանած և մեր հարց մեզ աւանդած սրբութիւնները նորա համար ոչինչ արժանաւորութիւն չեն ու- նենալ: Բայց հայրեր, մի մոռանաք որ դուք 19-րդ լուսաւո- րեալ գարու օրգեքն էք. դուք պէտք է ձեռք տուած գիմէք դէպի այդ բարձը եղէակական նպատակը, ձեր սրբազն պար- տականութիւնն է հոգալ ձեր զաւակների ապագայ բարօրու- թեան վերայ: Այս, դուք բազդաւոր էք, որ այժմ ձեր մէջ ունիք այնպիսի անձինք, որոնք պատրաստուած են ծառայել այդ նպատակին, որոնք այժմ հիմնել են արդէն մի երկու ծաղկոց. դուք բախտաւոր էք նա մանաւանդ, որ այդ ան- ձինքը կանանց ենուցն են, վասն զի մանկանց սկզբնական դաստիարակութեան մէջ կինը անփոխարինելի է. նա է բը-

նույթիւնից և Աստուծոյ հրամանաւ նշանակուած այդ նպատակի համար Ուրեմն օգնեցէք նըանց, հեծնեցէք նորեւը, ուղարկեցէք ձեր երեխաներին այդ ծաղկոցները, այն ժամանակը հայ մանուկներին սբաշապան հոնչուակը, որ մինչև այժմ տիրած էր ու ամպամածած, կը խնդայ և կ'օրհնէ ձեզ երկնքից:



20186

2013



